

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

20.03. 2001թ.

ժ. 12.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Ա. Չիլինգարյան, Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*) Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ս. Ներսիսյան (*Մարդահամարի վարչության պետ*), Կ. Կույունջյան (*Պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), , Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Ն. Մուշեղյան (*Անփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնի պետ*), Կ. Միրզոյան (*Տրանսպորտի և կապի ծառայությունների բաժնի առաջին կարգի մասնագետ*), Ս. Հունանյան (*Ջրադիմացության և աշխատանքի վարձատրության բաժնի առաջին կարգի մասնագետ*), Ա. Առուշանյան (*Տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ*)

Օրակարգի նախագծում՝ չորս հարց.

1. «Ցուցումներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ քաղաքների համար կազմված տների (շինությունների) ցուցակների, գյուղական վայրերում՝ գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ընդունման կարգի մասին» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան, Կ. Կույունջյան/

2. «2001 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» նախատեսված աշխատանքների կատարման մոնիտորինգի վարման ձևը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Չիլինգարյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին՝

3.1 Հաշվետվություն 2001թ. հունվարի 18-ից մինչև փետրվարի 14-ը Ճապոնիայի կառավարության «JICA» կազմակերպության կողմից կազմակերպված «Անդրկովկասյան երկրների և Ճապոնիայի երիտասարդության ընկերության» ծրագրին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Կ. Միրզոյան/

3.2 Հաշվետվություն 2001թ. փետրվարի 14-16-ը Շվեդիայի ԺՆՆ քաղաքում կայացած վիճակագրական տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման հարցերին նվիրված խորհրդակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Վ. Դավթյան/

3.3 Հաշվետվություն 2001թ. փետրվարի 26-28-ը Մոսկվա քաղաքում USAID / PADCO ծրագրի կողմից կազմակերպված սեմինար-ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան, Ս. Հունանյան, Ա. Առուշանյան/

4. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը քվեարկությամբ հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Ցուցումներ չէ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ քաղաքների համար կազմված տների (շինությունների) ցուցակների, գյուղական վայրերում՝ գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ընդունման կարգի մասին» փաստաթուղթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/

Նշվեց, որ չէ 2001թ. մարդահամարի նախապատրաստման առաջին փուլում քաղաքներում և խոշոր գյուղերում ցուցակագրողների կողմից կազմվում են տների, իսկ գյուղական բնակավայրերում՝ գյուղապետի աշխատակազմի կողմից, գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակներ: Այդ աշխատանքների կատարման կարգի վերաբերյալ հրահանգներն ու ցուցումները հաստատվել են չէ ՎՊԽ փետրվարի 28-ի թիվ 30, 31 և 32 որոշումներով: Սույն ցուցումները նախատեսված են որպես ուղեցույց չէ ԱՎԾ մարզային վարչությունների և դրանց տարածքային բաժինների համար՝ ցուցակների ընդունման աշխատանքները կազմակերպելու համար: Վերոնշյալ ցուցումներին կցված են նաև ցուցակների ընդունման գործընթացի վերաբերյալ որոշ պարզաբանումներ՝ հարցերի և պատասխանների տեսքով: Խորհրդի անդամների կողմից ներկայացված խմբագրական բնույթի դիտողությունները ընդունվել են և կատարված են անհրաժեշտ փոփոխությունները:

Որոշեցին՝ հաստատել «Ցուցումներ չէ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ քաղաքների համար կազմված տների (շինությունների) ցուցակների, գյուղական վայրերում՝ գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ընդունման կարգի մասին» փաստաթուղթը:

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «2001 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» նախատեսված աշխատանքների կատարման մոնիտորինգի վարման ձևը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Չիլինգարյան/

Նշվեց, որ «Պետական վիճակագրության մասին» չէ օրենքի հոդված 10-ի դ/ կետում նշված է. «Խորհուրդը ... վերահսկում է պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարումը և հաստատում տարեկան ծրագրի կատարման հաշվետվությունը»: Դրա ապահովման համար չէ ԱՎԾ նախագահի 07.03.01թ. թիվ 27 հրամանով տրվել էր հանձնարարական մշակելու և Խորհրդի հաստատմանը ներկայացնելու «2001 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» նախատեսված աշխատանքների կատարման մոնիտորինգի վարման ձևը: Մոնիտորինգի վարման ներկայացվող ձևը հնարավորություն կտա ամբողջությամբ վերահսկել Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով նախատեսված աշխատանքների ընթացքը, քանզի յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ի դրությամբ չէ ԱՎԾ գործառնական ստորաբաժանումները կներկայացնեն լրացված աղյուսակները Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնին, իսկ վերջինս մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը ամբողջական փաթեթը կներկայացնի Խորհրդի անդամներին և չէ ԱՎԾ նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավարին:

Առաջարկություն՝

Ս. Մնացականյան – Տվյալ տարվա շեշտադրման անհրաժեշտությունը չկա, քանզի դա կարող է նախադեպ ստեղծել յուրաքանչյուր տարվա համար մոնիտորինգի նոր ձևի մշակման համար: Վերնագրում «2001թվականի» բառերի փոխարեն հարկ է գրել «տարեկան» բառը:

Ա. Չիլինգարյան – ընդունելի է:

Որոշեցին՝

1. հավանություն տալ «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով» նախատեսված աշխատանքների կատարման մոնիտորինգի վարման ձևին:

2. ՀՀ ԱՎԾ կենտրոնական ապարատի գործառնական ստորաբաժանումներին՝ ոչ ուշ, քան եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժին ներկայացնել տեղեկատվություն ըստ մոնիտորինգի վարման ձևի համապատասխան աղյուսակի:

3. Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկետինգի բաժնին՝ ամփոփել ստացված տեղեկատվությունը և ամբողջական փաթեթը ոչ ուշ, քան եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներկայացնել ՀՀ ՎՊԽ անդամներին և ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավարին:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին՝

3.1 Հաշվետվություն 2001թ. հունվարի 18-ից մինչև փետրվարի 14-ը Ճապոնիայի կառավարության «JICA» կազմակերպության կողմից կազմակերպված «Անդրկովկասյան երկրների և Ճապոնիայի երիտասարդության ընկերության» ծրագրին մասնակցության վերաբերյալ:

/Ներկայացնող՝ Կ. Միրզոյան/

3.2 Հաշվետվություն 2001թ. փետրվարի 14-16-ը Շվեդիայի ԺՆՆ քաղաքում կայացած վիճակագրական տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման հարցերին նվիրված խորհրդակցության վերաբերյալ:

/Ներկայացնող՝ Վ. Դավթյան/

3.3 Հաշվետվություն 2001թ. փետրվարի 26-28-ը Մոսկվա քաղաքում USAID / PADCO ծրագրի կողմից կազմակերպված սեմինար-ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան, Ս. Հունանյան, Ա. Առուշանյան/

Որոշեցին՝

բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Այլ հարցեր

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան